

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Posted on April 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Խմբագրական, 10 Ապրիլ 2023

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի Լենինկրատի շրջափակման կրկնօրինակը կը տեսնենք Հայաստանի պատմութեան մէջ: Լենինկրատցիք սառնոյցներու վրայով կրցեր էին անցք մը բանալ, իսկ մենք չկրցանք ասեղի ծակ մը նոյնիսկ յաջողցնել: Ալիւեւան մեքենան անխափան կ'աշխատի՝ սեղմելով շրջափակման օղակը, ամէն պատեհ առիթով թիզ առ թիզ յառաջանալով եւ մեթը-մեթը մտնելով ՀՀ սահմաններէն ներս: Թուրքագերիները արդէն հասած են «տեղ», այս պարագային սահմանամերձ Տեղ գիւղը, որմէ ետք թշնամիներուն յաջորդ քայլը «սարի ետեւը» գտնուող Գորիս քաղաքն է...

Այս յառաջխաղացումներուն մասին կը գրուէին, կը խօսուէին, կը զգուշացուէին, բայց շատեր անհաւատալի եւ անհաւանական կը գտնէին: Խնդրեմ՝ մեր թշնամիները մի՞թէ չմօտեցան Ջերմուկի մերձակայ բարձունքներուն ու հասան Սեւ լիճ, իսկ հիմա՝ անոնք Գորիս քաղաքէն թնդանօթագարկ մը հեռու են միայն:

Ինքնաբերաբար հարց կու տանք՝ մենք պետութիւն ունի՞նք, նուազագոյն զօրքը ունի՞նք, մատնաչափ մը մտահոգութիւն կ'արտայայտե՞նք, բացի քանի մը կամաւոր ու արիասիրտ հայրենակիցներէ, որոնց մէջ եւ քաջասիրտ հայ կանայք...

Խաղաղապահները կը շարունակեն անտարբեր մնալ, միջազգային դիտորդները պարզապէս կը դիտեն ու կը զեկուցեն: Այսքան:

Ի՞նչ է Թուրքայեճանի նպատակը: Աչքի լոյսի պէս յստակ է՝ հայաթափել Արցախը, Նախիջեւանի հետ Սիւնիքի վրայով ազատ հաղորդակցութեան մէջ մտնել, ծառայութիւններ մատուցել Իզրայէլին՝ ռազմագիտական կարեւոր դիրքեր դնելով վերջինիս տրամադրութեան տակ: Նպատակադրուած է յաջորդ տասնամեակներու ընթացքին շարունակել պատար-պատար տեր դառնալ նաեւ ՀՀ-ի այլ տարածքներու: Վերջերս բացայայտուելով վրայ է նաեւ վաղուց ծրագրուած նոր հարուած մը, այն է՝ Հայաստանի Հանրապետութիւնը նոր ու ամեհի պարտքի տակ դնել: Արդարեւ Ազրայեճան կրկին անգամ մեզմէ քանի մը քայլ առաջ անցնելով ոչ միայն յաջողեր էր Խոջալուի զանգուածային մարդասպանութիւնը վերագրել «հայկական գրաւող ուժերու» եւ զայն ներկայացնել որպէս ցեղասպանական արարք, այժմ արդէն պատրաստ է հսկայական դատական հայց մը ներկայացնել Միջազգային դատարանին՝ ՀՀ-էն պահանջելով անելի քան 250 միլիարդ տոլարի վնասուց հատուցում մը, քանի որ, ըստ այդ հայցի, ՀՀ-ն անելի քան 25 տարի իբր «զաւթած» ըլլալով ատրայեճանական տարածքներ, զանոնք քար ու քանդ է ըրած, շահագործած է, եւ մօտ մէկ միլիոն արարած (ազերի-թաթար) անօթեւան ու խեղճ վիճակի մէջ թողած:

Նպատակը յստակ է՝ անընդհատ ճնշումներու տակ դնելով մեր հանրապետութիւնը՝ շատ բան զիջելու պարտադրանքի տակ դնել:

Ինչո՞ւ ոչ մէկ դիմադրութիւն ցոյց կը տրուի, ինչո՞ւ Ռուսական Դաշնութիւնը ոչինչ կ'ընէ

Եւ բաներով կը խաղայ, բայց մատ կը թօթուէ արդէն իսկ շուարած իշխանութեան մը եւ անոր ղեկավարին վրայ: Ըստ քաղաքական կարգ մը վերլուծաբաններու, ՌԴ-ի նպատակը ուրուագիծէ մը անդին անցնելով յստակ դիմագիծ կը զգենու արդէն՝ Սիւնիքի միջանցքը իրականացնել եւ Ատրպէյճանի, Նախիջեւանի ու Թուրքիայի վրայով այլընտրանք մը ստեղծելով հարաւէն ալ կարելոր ելք մը ունենալ դէպի Միջերկրական ծով ու Եւրոպա: ՌԴ-ի եւ Ատրպէյճանի շահերը կը համընկնին այս հանգրուանին: Միւս կողմէ՝ Արեւմուտքը խօսքէ ու դատապարտումներէ անդին չ'անցնիր, մինչ անցեալին արեւմտեան ուժեր դիմած են ռազմական քայլերու: Մեզի «շրթնային ծառայութիւններ» պետք չեն:

ՀՀ-ի իշխանութիւններու կրաւորական վիճակը ոսկի առիթ մը կու տայ մեր թշնամիներուն անարգել յառաջանալու իրենց ցանկացած ուղղութեամբ: Բացի այդ, այդ նոյն իշխանութիւնները եւ «հինգերորդ շարասիւն» կոչուածը ընդատակեայ աշխատանքներ կը տանին եւ կը փորձեն ուղեղալուացում կատարել, ըսելով թէ ՀՀ-ն ուժ չունի դիմադրելու «հակառակորդին» (իրենց պաշտօնական արտայայտութեամբ) եւ չի փափաքիր նոր զոհեր տալ: Դեռ աւելին, անոնք տակաւին խլրդային աշխատանք տանելով կը տարածեն այն գաղափարը, թէ Արցախը միշտ ալ «գլխու ցաւ» եղած է ՀՀ-ի համար եւ կամ սա կամ նա գիւղը ատրպէյճանաբնակ եղած է 1989-էն առաջ:

Եզրակացնելով՝ Հայաստանի Հանրապետութեան վարչակարգը ծախողած կառոյց մըն է, ուր ամէն տեսակ հատուածական պայքարներ, օտար աղբիւրներէ սնուող ՉԼՄ-ներ, կրօնական աղանդներ կը գործեն ազատ ու անխափան: Ո՞ր կ'երթայ մեր Հայրենիքը:



Կա՞յ ելք

անելանելի այս իրականությունն է: ԱՅՈ՛՛: Ան համազգային հոգեւոր-բարոյական զարթօնքն է եւ, անյապաղ, համաժողովրդական ինքնապաշտպանութեան պատրաստութիւնը: 14-60 տարեկան բոլոր հայերը, հայրենաբնակ թէ սփիւռքահայ, պէտք է ռազմական պատրաստութիւն անցնին յանուն Հայրենիքէն մնացած այս կտոր մը հողի պաշտպանութեան: Համազգային մեծագոյն ամօթ է, որ այսօր 70 հազար հայազգիներ ռուսական, 30 հազար ալ ուրբաինական բանակին մէջ, գիրար կը սպաննեն...: 100 հազա՛ր եղբայրասպան...:

1982-ի ամառը Իգրայել Լիբանան ներխուժեց, գրաւեց երկրին երկու երրորդը եւ պարտադրեց 17 Մայիս 1983-ի «Խաղաղութեան» համաձայնագիրը: Լիբանանի ժողովուրդին մեծ մասը, մասնաւորաբար շիիները, կոմկուսը եւ ղովմիները մերժելով մերժեցին այդ համաձայնագիրը եւ ժողովրդային դիմադրական շարժումով ու անձնասպանական գործողութիւններով, այդ ստորացուցիչ համաձայնագիրը պատմութեան աղբանոցը նետեցին, գրաւման ուժերն ալ սահմանէն անդին շարտեցին: Թունուզցի բանաստեղծ Ապու Կասեմ ալ-Շապպին գրած է.

**Եթէ ժողովուրդն ապրիլ ուզեց՝ ճակատագի՛րն իսկ կ'ենթարկուի
անոր,**

ԵՆ զիշերուան իսաւորը կը վերանայ եւ շղթաները կը փշրուին»:

Comments



Rafael Hambardzumyan – 2023-04-10 06:42:23

Մեր ժողովրդի ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԾԻՔՆ ԱՅՍՕՐ Ա՛ՅՆ ԱՆԺԽՏԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ Է, ՈՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԵՄ 1988 թ. ի վեր սանձազերծած ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՂԸ այդ պատերազմում ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՆԵՐԻՄԱԳՈՅՆ ԹՇՆԱՄԻ ՌՈՒՄ ԴԻԲԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ Է: ՀՀ բնակչության մեծամասնությունը այն կարծիքին է նաեւ, որ ՀՀ հակառակորդը ՄՇՏԱՊԵՍ թուրք-ազերիներին համարողները ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳՐՈՎ ԽԱԲՈՒՄ-ՄՈԼՈՐԵՑՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ: ԱՅՍԻՆՔՆ՝ նմանները Ռուսաստանի գործակալներն են մեր մէջ, որոնց պիտի յայտարարենք այս պատերազմում հայութեան թշնամիներին ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ-ԶԻՆԶԿԻՑՆԵՐԸ ,ԱՅՍԻՆՔՆ՝ ինքնապաշտպանություն-ազատամարտ մղող հայութեան ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ լրտեսները, որոնց պետք է յայտարարենք Հայոց պետականությունը ոչնչացնող թշնամու ՀԱՅԱԿՈՐԾԱՆՈՒՄԸ ԽԱՓԱՆՈՂ ազատապայքարի ելած հայ ժողովրդի ոխերիմ թշնամին: